

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի 30 2018թ.

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ

Ծանոթագրություն 1. Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում

1.1 Իրավական դաշտ

1.1.1 Բանկի հիմնական գործունեությունը

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 2004 թվականին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 2004 թվականի հոկտեմբերի 7-ին՝ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրված N84 արտոնագրային համարով: Բանկային գործունեության լիցենզիան տրվել է ՀՀ ԿԲ-ի Խորհրդի 25.02.2005թ. թիվ 74Ա որոշմամբ:

Բանկի հիմնական գործունեությունը կորպորատիվ, ներդրումային և մասնավոր ֆինանսների կառավարմանը բնորոշ ծառայությունների մատուցումն է՝ ֆինանսական գործիքներում ներդրումներ, ֆիզիկական և իրավաբանական անձանցից ավանդների ներգրավում, ֆինանսավորման (վարկավորում, ֆակտորինգ) և բանկային այլ ծառայությունների մատուցում:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում: Բանկի իրավաբանական և փաստացի գործունեության հասցեն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 10: Բանկի աշխատակիցների թվաքանակը կազմել է 126, այդ թվում սպասարկող անձնակազմը 8:

1.1.2 Գործարար միջավայրը

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին:

Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Բանկի ապագա գործունեության վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում որևէ ճշգրտումներ, որոնք կարող են առաջանալ նշված անորոշությունների հետագայում որոշակի դառնալու արդյունքում: Նման ճշգրտումները, եթե այդպիսիք կլինեն, կարտացոլվեն Բանկի ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, երբ այդ ճշգրտումներն ի հայտ կգան և դրանք հնարավոր կլինի գնահատել:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում: Գնանշումները ցածր իրացվելի շուկաներում կարող են չհամընկնել ֆինանսական գործիքների իրական արժեքներին, ինչը հնարավոր կլինե՞ր ակտիվ շուկայի դեպքում, միմյանց հետ գործարքների պատրաստ մեծ թվով վաճառողների և գնորդների պայմաններում:

1.1.3 Բանկը որևէ խմբի անդամ չի հանդիսանում:

1.2 Կորպորատիվ կառավարում

1.2.1 Խորհրդի կառուցվածքը և կազմը

Բանկի Խորհուրդը (ներառյալ Խորհրդի նախագահը) բաղկացած է հինգ անդամից: Խորհրդի նախագահը հանդիսանում է Վարդան Սիրմաքետը, Խորհրդի մյուս անդամներն են՝ Կիրկոր Արդեն Սելվեֆյան, Պատրիկ Բիտտել, Գևորգ Չաքմիշյան, Աշոտ Սալնազարյան:

1.2.2 Տնօրինության կառուցվածքը և կազմը

Բանկի Տնօրինությունը (ներառյալ Տնօրինության նախագահը) բաղկացած է յոթ անդամից: Տնօրինության նախագահը հանդիսանում է Բանկի գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանը, Տնօրինության մյուս անդամներն են Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման դեպարտամենտի տնօրեն Գրիգոր Մովսիսյանը, Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Ներդրումային դեպարտամենտի տնօրեն Կարեն Տուրյանը, Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Վարկավորման դեպարտամենտի տնօրեն Գրիգոր Հովհաննիսյանը, Բանկի գործադիր տնօրենի տեղակալ- Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի տնօրեն Գևորգ Խաչատրյանը, Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրեն Արկադի Փինաշյանը, Բանկի գլխավոր հաշվապահ-Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների դեպարտամենտի տնօրեն Սեդրակ Բաղդասարյանը:

1.2.3 Բանկի 14,588 հատ բաժնետոմսերից 11,670 հատ սովորական բաժնետոմսերի բաժնետերը հանդիսանում է «Էյչ-Վի-Էս Հոլդինգ» ՍՊԸ-ն, իսկ 2,918 հատ սովորական բաժնետոմսերի բաժնետերը հանդիսանում է «Բելեգինգսմաչեփիջ Ջոնգո» ՍՊԸ-ն:

1.2.4 Բանկի նշանակալից մասնակիցներն են «Էյչ-Վի-Էս Հոլդինգ» ՍՊԸ-ն, որը տիրապետում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 80(ութսուն) տոկոսին և «Բելեգինգսմաչեփիջ Ջոնգո» ՍՊԸ-ն, որը տիրապետում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20(քսան) տոկոսին:

1.2.5 Բանկի Խորհուրդը մեծ ուշադրություն է դարձնում Բանկում կարգապահ և բարձր որակավորում ունեցող միջին և բարձր օղակի ղեկավարների առկայության ապահովմանը: Խորհրդի կողմից պարբերաբար ուսումնասիրվում է ՀՀ-ում

աշխատուժի շուկան և Բանկի ղեկավարների վարձատրության (ներառյալ խրախուսմանն ուղղված վճարների) մակարդակը պահպանում է առավելագույն մրցակցային սահմաններում:

- 1.2.6 Արտաքին աուդիտորների կողմից Բանկի 2017 թվականի ֆինանսական հաշվետվությունները աուդիտորական ստուգման ենթարկելու համար վճարվել է 11.1 միլիոն ՀՀ դրամ գումար:

Ծանոթագրություն 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը

Բանկում ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում և ներկայացվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ՖՀՄՍ-ների և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերի համաձայն:

Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու որևէ հարցի վերաբերյալ հաշվապահական հաշվառման ստանդարտներում և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերում մոտեցումների բացակայության դեպքում Բանկը մշակում է դրանք ինքնուրույն, ելնելով՝

- ա. նման հարցերին վերաբերվող հաշվապահական հաշվառման ստանդարտներով և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից և ցուցումներից,
- բ. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքներից, ֆինանսական հաշվետվությունների տարրերի սահմանումներից, ճանաչման չափանիշներից և չափման հիմունքներից,
- գ. գործնական փորձից՝ այնքանով որքանով դա համահունչ է սույն կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված դրույթներին:

Բանկում հաշվապահական հաշվառումը վարվում է՝

- ա. Հայաստանի Հանրապետության արժույթով՝ հայկական դրամով,
- բ. Կրկնակի գրանցման եղանակով՝ ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանին և հաշվային պլանի կրառման հրահանգին համապատասխան,
- գ. Անընդհատ՝ Բանկի պետական գրանցման պահից մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը:

Բանկի հաշվապահական հաշվառումը վարելիս և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս պահպանում է անընդհատության, հաշվետվողականության, հաշվեգրման,

հասկանալիության, էականության, միասնականության, արժանահավատության, համադրելիության, հաշվանցման և սահմանազատման սկզբունքները:

2.2. Համախմբման սկզբունքները

Բանկը որևէ կերպ հաշվետվություններ չի համախմբում, հետևաբար չունի համախմբման սկզբունքներ:

2.3. Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես «որպես տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ համապատասխանաբար օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը ճանաչվում է համապատասխան զուտ կամ համախառն հաշվեկշռային արժեքի հիման վրա՝ ՖՄՀՍ 9-ի պահանջների համաձայն:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարման և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը համարվում է վաստակած

Ձուտ առևտրային եկամուտ

Ձուտ առևտրային եկամուտը ներառում է իրական արժեքով չափվող շահույթով և վնասով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, իրական արժեքով

չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից առաջացող իրացված եկամուտը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժույթային տարբերություններից գոյացող բոլոր տեսակի եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից առաջացող զուտ եկամուտը կամ ծախսը:

2.4. Արտարժույթային գործառնությունների հաշվառումը

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված իրական արժեքով չափվող շահույթի և վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում:

Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից առաջացող մնացած բոլոր հետևանքները, որոնց հաշվառումը չի կարգավորված սույն ծանոթագրություններով, կարգավորվում են համապատասխան ՖՄՀՍ-ներով:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	30 հունիս 2018	30 հունիսի 2017
<< դրամ/1 ԱՄՆ դոլար	482.24	480.47
<< դրամ/1 եվրո	561.81	548.12

2.5. Հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների

մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

2.6. Ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը

Բակը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած

Ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները:

Սկզբնական ճանաչումից հետո այն ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված մայր գումարները և տոկոսագումարները հավաքագրելու նպատակով, չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, իսկ այն ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված մայր գումարները և տոկոսագումարները հավաքագրելու նպատակով, ինչպես նաև հարկ եղած դեպքում վաճառելու նպատակով, չափվում են իրաան արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, Իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներով հաշվառվող ֆինանսական ակտիվներ և Իրական արժեքով չափվող շահույթ և վնասով հաշվառվող ակտիվներ: Ֆինանսական ակտիվների նման դասակարգումը կատարվում է՝ հիմք ընդունելով Բանկի բիզնես մոդելը և դրա սահմաններում իրականացվելիք Բանկի հետագա նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է այն դեպքում, երբ տեղի է ունեցել Բանկի բիզնես մոդելի փոփոխություն:

2.7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

2.8. Ռեպո համաձայնագրերով գործառնություններ

Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, իսկ այդ պայմանագրերի համաձայն ստացված միջոցները գրանցվում են պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ կամ պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հողվածներում:

Հետզնման համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերը չեն ճանաչվում հաշվեկշռում որպես ակտիվներ, այլ հաշվառվում են Բանկի հետհաշվեկշռում, իսկ այդ արժեթղթերի դիմաց տրամադրված գումարները գրանցվում են որպես պահանջներ այլ բանկերի նկատմամբ կամ հաճախորդներին տրամադրված ռեպո պայմանագրեր հոդվածներում:

2.9. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, սվոպներ և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող շահույթ և վնասով հաշվառվող ֆինանսական գործիքներ, այնուհետև դրանք չափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն: Նշված գործառնություններից արդյունքները հաշվառվում են որպես առևտրային գործունեությունից եկամուտ կամ ծախս՝ կախված ածանցյալ գործիքների բնույթից:

2.10. Վարկեր և փոխառություններ բանկերին, հաճախորդներին

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին և այլ հաճախորդներին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերը և այլ փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆինանսական կազմակերպությունների և այլ հաճախորդների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

2.11. Արժեզրկման գծով կորուստների որոշման հիմունքները

Արժեզրկման կորուստների պահուստաֆոնդը ձևավորվում է համաձայն ՖՀՄՍ 9-ը ստանդարտի պահանջների՝ սպասվող կորուստների գնահատման միջոցով: Արժեզրկման կորուստների պահուստաֆոնդը ձևավորվում է “Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքելու համար պահվող ակտիվներ” և “Պայմանագրային դրամական

միջոցների հոսքեր հավաքելու և վաճառելու համար պահվող ակտիվներ“ բիզնես մոդելներին համապատասխանող ֆինանսական ակտիվների համար:

Սպասվող վարկային կորուստները գնահատելիս Բանկը հաշվի է առնում տեղեկատվության առավել լայն շրջանակ՝

- Անցյալում տեղի ունեցած իրադարձություններ, ինչպիսիք են նմանատիպ ֆինանսական գործիքների համար կրած վնասների վերաբերյալ պատմական փորձը;
- ներկա իրավիճակը;
- Արժանահավատ ու հիմնավորվող կանխատեսումներ, որոնք ազդում են ֆինանսական գործիքներից առաջացող ապագա դրամական հոսքերի սպասվող հավաքագրելիության վրա:

Ընդհանուր մոտեցմամբ արժեզրկումից կորստի հաշվարկը կատարվում է եռափուլ գործընթացով, որն արտացոլում է ֆինանսական գործիքի վարկային որակի նվազումը: Առաջին փուլը վերաբերում է գործիքներին, որոնց վարկային որակը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի նվազել կամ որոնք ունեն ցածր վարկային ռիսկ: Երկրորդ փուլը վերաբերում է ֆինանսական գործիքներին, որոնց մոտ սկզբնական ճանաչումից հետո նկատվել է վարկային որակի էական նվազում, սակայն վարկային կորուստ ազդարարող իրադարձության վերաբերյալ օբյեկտիվ վկայություններ չկան: Երրորդ փուլը վերաբերում է ֆինանսական ակտիվներին, որոնց արժեզրկման վերաբերյալ առկա են օբյեկտիվ վկայություններ:

Վարկային ռիսկի աճը գնահատելիս կազմակերպությունը համադրում է հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի չհավաքագրման ռիսկի սկզբնական ճանաչման պահի դրությամբ նույն ռիսկի հետ՝ հաշվի առնելով արժանահավատ ու հիմնավորվող տեղեկատվությունը:

Ցածր վարկային ռիսկ պարունակող գործիքների համար Բանկը կիրառում է ՖՀՄՍ 9-ը ստանդարտի առաջարկաց “պարզեցված մոտեցումը”: Ռիսկը համարվում է ցածր, եթե՝

- Գործիքն ունի չհավաքագրման ցածր ռիսկ,
- Փոխառուն ի վիճակի է մարել իր պայմանագրային պարտավորությունները,
- Տնտեսական ու գործարար միջավայրի բացասական փոփոխություններն էականորեն չեն ազդի փոխառուի վճարունակության վրա:

Պարզեցված մոտեցումը չի պահանջում, որպեսզի կազմակերպությունները հետևեն վարկային ռիսկի փոփոխություններին: Այն պահանջում է, որպեսզի կազմակերպությունները ճանաչեն կորստի պահուստը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ելնելով ֆինանսական ակտիվի ամբողջ ժամկետի համար հաշվարկված սպասվող վարկային կորուստից:

2.12. Տոկոսների հաշվեգրման դադարեցումը

Տոկոսների հաշվեգրումը եկամուտների հաշիվներին դադարեցվում է, եթե ակտիվը սահմանված կարգի համաձայն դուրս է գրվում հաշվեկշռից:

2.13. Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հաշվառումը

Ֆիքսված մարման ժամկետով ֆինանսական ակտիվները, որոնք Բանկի բիզնես մոդելի համաձայն պահվում են պայմանագրով նախատեսված մայր գումարներ և տոկոսագումարներ հավաքագրելու նպատակով, հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստները:

2.14. Հեջի հաշվապահական հաշվառումը

Հեջի հաշվապահական հաշվառումը զուգահեռաբար ճանաչում է հաշվանցման ազդեցությունը զուտ շահույթի կամ վնասի վրա, որն առաջանում է հեջինգային գործիքների և հեջավորվող հոդվածների իրական արժեքների փոփոխությունների հետևանքով:

2.15. Ասոցիացված և դուստր կազմակերպություններում ներդրումների հաշվառումը

Բանկը ասոցիացված և դուստր կազմակերպություններ չունի, հետևաբար այդպիսի հաշվառում չի մշակել:

2.16. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով: Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Բանկին հետ վերադարձման, և ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախս: Տրամադրված ցանկացած զեղչ և արտոնություն հանվում է գնման գնից: Հետագա ծախսերը, որոնք վերաբերվում են արդեն ճանաչված հիմնական միջոցի միավորին, ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի

նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կիսուսն դեպի կազմակերպություն: Մյուս բոլոր հետագա ծախսերը պետք է ճանաչվեն որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր: Հիմնական միջոցների արժեքը փոխհատուցվում է դրանց մաշվածության հաշվեգրման միջոցով: Հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրումը Բանկն իրականացնում է՝ հանաձայն Բանկի Հաշվապահական հաշվառման քաղաքականության պահանջների:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական ճանաչման ժամանակ ձեռք բերման արժեքով: Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է Բանկը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջինների որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի: Ոչ նյութական ակտիվների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Բանկը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

2.17. Բանկերի և հաճախորդների միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, սկզբնապես չափվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

2.18. Ընդհանուր բանկային ռիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշման և դրանց հաշվապահական ձևակերպման հիմունքը

Ընդհանուր բանկային ռիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշումն ընդունվում է Բանկի Խորհրդի կողմից, որն իրականացվում է Բանկի զուտ շահույթից գլխավոր պահուստին կատարվող մասհանումներով:

2.19. Կապիտալ և էմիսիոն եկամուտ

Կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերվող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես էմիսիոն եկամուտ:

Գնված սեփական բաժնետոմսեր

Երբ Բանկը գնում է իր սեփական բաժնետոմսերը, սեփական կապիտալը նվազեցվում է վճարված գումարի չափով, ներառյալ գործառնությանը բնորոշ բոլոր ծախսերը՝ նվազեցված հարկերով, մինչև գործարքի չեղյալ համարվելը կամ վերաթողարկումը: Երբ գնված բաժնետոմսերը վաճառվում են երրորդ կողմից կամ վերաթողարկվում են, ստացված գումարները ներառվում են կապիտալում:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչ այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

2.20. Փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը

Փոխանակման փոխարժեքն ամեն օր հաստատվում է Բանկի գործադիր տնօրենի կողմից, որի առաջարկը ներկայացվում է համապատասխան ստորաբաժանման կողմից՝ ֆինանսական համակարգում տիրող իրավիճակն ուսումնասիրելուց հետո:

2.21. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտները և ծախսերը հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրությամբ հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Գործառնական վարձակալության դիմաց հաշվեգրված վարձավճարները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով:

2.22. Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում իրականացվում է, եթե տեղի է ունեցել Բանկի բիզնես մոդելի փոփոխություն:

2.23. Տեղեկատվություն սեզմենտների վերաբերյալ

Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվության բացահայտումն իրականացվում է թիվ 14 հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջներին համապատասխան:

Սույն ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին և Բանկի Խորհրդի կողմից հաստատված Հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

Ծանոթագրություն 3. «Ջուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ»

<u>Տոկոսային և նմանատիպ եկամուտներ</u>	01.04.18	30.06.18	01.01.18	30.06.18	01.04.17	30.06.17	01.01.17	30.06.17
Տոկոսային եկամուտներ բանկի ընթացիկ հաշիվներից բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից		38,133		79,400		5,109		10,816
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից		1,597,751		3,147,771		1,461,475		2,804,021
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից		2,635,489		5,007,914		1,856,295		3,539,406
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից		27,240		65,811		33,519		63,605
Այլ տոկոսային եկամուտ		12,859		23,443		16,531		32,136
Ընդամենը		4,311,472		8,324,339		3,372,929		6,449,984

<u>Տոկոսային և նմանատիպ ծախսեր</u>	01.04.18	30.06.18	01.01.18	30.06.18	01.04.17	30.06.17	01.01.17	30.06.17
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ավանդների և վարկերի դիմաց		420,876		821,197		314,452		587,403
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց		1,859,798		3,365,767		1,206,023		2,333,335
Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց		(4,003)		71,672		175,632		347,863
Այլ տոկոսային ծախսեր		350,215		674,746		123,651		234,955
Ընդամենը		2,626,886		4,933,382		1,819,758		3,503,556

Ջուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	1,684,586	3,390,957	1,553,171	2,946,428
--	------------------	------------------	------------------	------------------

Ծանոթագրություն 4.«Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»

<u>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ</u>	01.04.18	30.06.18	01.01.18	30.06.18	01.04.17	30.06.17	01.01.17	30.06.17
Դրամարկղային գործառնություններից		8,236		14,805		7,981		15,837
Հաշվարկային ծառայություններից		44,493		80,038		35,045		71,889
Նրաշխարկներից, հոծարագներով, ակրեդիտիվներով գործառնություններից, հավատարմագրային կտավարման գործառնություններից		1,864		3,565		653		822
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից		10,894		21,205		14,011		26,289
Այլ կոմիսիոն վճարներ		49,827		56,340		4,887		9,403
Ընդամենը		115,314		175,953		62,577		124,240

<u>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</u>	01.04.18	30.06.18	01.01.18	30.06.18	01.04.17	30.06.17	01.01.17	30.06.17
Թրրակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ		6,586		12,329		7,372		13,126
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից		4,521		9,636		2,665		4,370
Բորսայական ծառայությունների գծով		5		5		5		10
Այլ կոմիսիոն վճարներ*		17,053		36,317		6,375		21,489
Ընդամենը		28,165		58,287		16,417		38,995

Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	87,149	117,666	46,160	85,245
--	---------------	----------------	---------------	---------------

Ծանոթագրություն 5. «Ջուտ եկամուտ առևտրային գործառնություններից»

<u>Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ</u>	01.04.18	30.06.18	01.01.18	30.06.18	01.04.17	30.06.17	01.01.17	30.06.17
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ առք ու վաճառքից զուտ եկամուտ, այլ բոլոր բաժնետոմսերից		264,307		446,989		49,948		65,635
պարտքային արժեթղթերից		(35,347)		(14,035)		81		521
պարտքային արժեթղթերից		299,654		461,024		49,867		65,114
Ընդամենը		264,307		446,989		49,948		65,635

<u>Արտարժույթային գործառնություններից</u>	01.04.18	30.06.18	01.01.18	30.06.18	01.04.17	30.06.17	01.01.17	30.06.17
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ		48,043		151,539		81,032		121,316
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ		387		(21,525)		(160,693)		(205,070)
Աժանցյալ գործիքներից զուտ վնաս		3		2,809		63,721		106,852
Ընդամենը		48,433		132,823		(15,940)		23,098

<u>Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներից և հուշարձաններից</u>	01.04.18	30.06.18	01.01.18	30.06.18	01.04.17	30.06.17	01.01.17	30.06.17
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշարձանների առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ		731		3,013		6,825		12,144
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշարձանների վերագնահատումից ստացված զուտ եկամուտ		(4,085)		(2,797)		(1,309)		13,500
Ընդամենը		(3,354)		216		5,516		25,644

Ջուտ եկամուտ առևտրային գործառնություններից	309,386	580,028	39,524	114,377
---	----------------	----------------	---------------	----------------

Տնտեսագրություն 6. «Այլ գործառնական եկամուտ»

<u>Այլ գործառնական եկամուտ</u>	01.04.18	30.06.18	01.01.18	30.06.18	01.04.17	30.06.17	01.01.17	30.06.17
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից		51,742		115,813		46,474		93,594
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված գուտ եկամուտներ		0		558		-		-
Այլ եկամուտներ**		60,871		69,378		21,374		42,206
Ընդամենը		112,613		185,749		67,848		135,800

Տնտեսագրություն 7. «Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված գուտ մասհանումներ»

<u>Ընդամենը վարչային կորուստների արժեզրկման ծախսեր</u>	01.04.18	30.06.18	01.01.18	30.06.18	01.04.16	30.06.16	01.01.16	30.06.16
Վարկեր և փոխառվածքներ հաճախորդներին		(492,848)		(304,467)		(164,764)		(181,382)
Ընդամենը		(492,848)		(304,467)		(164,764)		(181,382)

ՖՆՄՍ 9-ի պահանջով ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված գուտ մասհանումներ

	մնացորդը ժամանակա շրջանի սկզբում	կորուստների արժեզրկման ծախսեր	մնացորդը ժամանակա շրջանի վերջում
Վարկերի և փոխառվածքումներ	1,396,823	36,395	1,433,218
<i>Այդ թվում</i>			
դաս 1	595,995		621,237
դաս 2	220,874		419,142
դաս 3	579,954		392,938
Ֆակտորինգ	17,700	6,000	23,700
Բանկեր և այլ ֆինանսական կազմակերպություններ	101,473	(63,375)	38,098
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	690,787	320,169	1,024,971
Այլ ակտիվներ	4,057	949	5,006
Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով բանկի պայմանական պարտավորությունները	73,682	4,329	78,011
Ընդամենը մասհանումներ		304,467	

Տնտեսագրություն 8. «Ընդհանուր վարչական ծախսեր»

<u>Ընդհանուր վարչական ծախսեր</u>	01.04.18	30.06.18	01.01.18	30.06.18	01.04.17	30.06.17	01.01.17	30.06.17
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ Գործուղման ծախսեր		271,962		493,809		170,822		337,941
Ապահովագրության ծախսեր		8,590		12,117		3,059		7,050
Բանկի ստորվորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր		6,416		11,914		4,192		9,595
Բանկի շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության գծով ծախսեր		1,555		2,396		829		1,573
Առողիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր		13,410		29,536		13,421		32,097
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր		2,700		5,400		2,700		5,797
Տրանսպորտային ծախսեր		25,702		47,662		23,766		47,270
Տրանսպորտային ծախսեր		1,334		2,473		1,768		2,852
Ծախսեր հարկերի (բացառությամբ՝ շահութահարկի), տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով		1,562		2,848		998		3,158
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր		1,716		3,740		861		1,445
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր		2,438		6,045		3,770		6,286
Այլ վարչական ծախսեր**		4,198		8,369		7,878		12,201
Ընդամենը		341,583		626,309		234,064		467,265

* Աշխատակիցների միջին թվաքանակ	133	130	115	115
* Մեկ աշխատողին ընկնող միջին ամսական աշխատավարձի չափ	907	700	456	460

Տնտեսագրություն 9. «Այլ գործառնական ծախսեր»

<u>Այլ գործառնական ծախսեր</u>	01.04.18	30.06.18	01.01.18	30.06.18	01.04.17	30.06.17	01.01.17	30.06.17
Վճարված տուգանքներ և տույժեր		0		0				
Ինվեստացիայի համար կատարված վճարումներ		556		1,498		360		720
Գովազդային և մեքլայացուցչական ծախսեր		2,938		8,710		2,609		4,010
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր		38,106		75,731		33,639		68,798
Ավանդների երաշխավորման հիմնադրամին հատկացումներ		0		0		9,633		17,083
Այլ ծախսեր***		8,756		16,507		7,619		15,247
Ընդամենը		50,356		102,446		53,860		105,858

11 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20%: ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ: Ֆինանսական հաշվետվությունների կազմում նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով հաշվեկշռային արժեքների միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով: Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը:

Չափար ԳՅ դրամ	01.01.18	30.06.18	Արդյունավետ դրույքաչափ (%)	01.01.17	30.06.17	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը		3,172,924		2,505,855		
Շահութահարկ 20% դրույքաչափով		634,585	20	501,171		20
Չհարկվող եկամուտներ						
Չնկազմեցվող ծախսեր		7,885		7,253		
Դրական(Բացասական) փոխարժեքային տարբերություն		(21,512)		(84,106)		
Այլ		9,042		65,682		
Դարձված նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ						1
Ընդամենը շահութահարկի գծով ծախս		630,000		490,000		

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Չափար ԳՅ դրամ	30.06.18	Սեփական կապիտալում ճանաչված	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	31.12.17
Այլ պարտավորություններ	44,956	-	29,620	15,336
Արժեզրկված ակտիվներից ստացվելիք տույժեր	-	-	-	-
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	-
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	46,281			46,281
Դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ	5,841			5,841
Չանվտարողներին տրված վարկեր և կանխավճարներ	-		-	-
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	807			807
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	866,623			866,623
Դիմնական միջոցներ	277,527			277,527
Այլ ակտիվներ	4,753		-	4,753
Այլ պահուստներ	1,023,007	(181,861)		1,204,868
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	2,178,558		-	2,360,419
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	2,132,277		-	2,314,138

13 Դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ԳՅ ԿԲ-ում

Չափար ԳՅ դրամ	30.06.18	31.12.17
Կանխիկ դրամական միջոցներ	1,154,625	1,156,019
Թղթակցային հաշիվներ ԳՅ ԿԲ-ում	9,199,312	9,409,572
Դեպոզիտային միջոցներ ԳՅ ԿԲ-ում	20,000	2,500
Ընդամենը դրամական միջոցներ և մնացորդներ ԳՅ ԿԲ-ում	10,373,937	10,568,091

Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ծուլակտորներ

Չափար ԳՅ դրամ	30.06.18	31.12.17
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված	108,380	125,696
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված	108,380	125,696

14 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Չափար ԳՅ դրամ	30.06.18	31.12.17
Թղթակցային հաշիվներ	1,590,783	800,074
Դեպոզիտային միջոցներ բանկերում	245,793	242,486
Դեպոզիտային միջոցներ ֆինանսական կազմակերպություններում	540,077	632,081
Ավանդներ բանկերում	1,253,470	1,722,000
Ռեպր համաձայնագրեր բանկերում	6,014,866	0
Վարկեր այլ ֆինանսական կազմակերպություններում	480,192	407,582
Այլ հաշիվներ	15,984	2,949
Չափազանցված տուկուսներ	6,121	3,234
Արժեզրկված պահուստներ վարկերի և փոխառությունների գծով	(101,473)	(38,098)
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,045,813	3,772,308

16 Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	30.06.18	31.12.17
Վարկեր, այդ թվում	42,103,997	41,470,443
գործ	2,296,156	2,227,816
վճելի	3,206,320	2,917,213
Ֆակտորինգ	2,023,953	1,769,992
Օվերդրաֆտ	21,803,408	19,277,906
Ռեպր համաձայնագրեր	622,955	382,828
Այլ գումարներ	3,529	3,120
Հաշվեզրված տոկոսներ	657,478	537,121
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	67,215,320	63,441,410
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխառությունների գծով	(1,456,918)	(1,396,823)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	65,758,402	62,044,587

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունը ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքով.

Հազար ՀՀ դրամ	30.06.18	31.12.17
Մասնավոր ձեռնարկություններ, այդ թվում՝	65,283,186	53,514,450
խոշոր ձեռնարկություններ	42,513,037	27,717,929
փոքր և միջին ձեռնարկություններ	22,770,149	25,796,521
Ֆիզիկական անձից	1,040,261	9,133,466
Անհատ ձեռնարկատերեր	230,866	256,372
Այլ գումարներ	3,529	3,120
Հաշվեզրված տոկոսներ	657,478	537,122
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխառությունների գծով	(1,456,918)	(1,396,823)
Ընդամենը վարկեր և փոխառություններ	65,758,402	62,044,587

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացվում են ստորև.

Հազար ՀՀ դրամ	30.06.18	31.12.17
Հիփոթեքային	7,033,850	6,293,735
Սպառողական	2,052,571	2,447,249
Ավտոմեքենաների ձեռքբերման	2,174	9,654
Դեռզգնման պայմանագրեր	622,955	382,828
Այլ	328,711	0
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր (համախառն)	10,040,261	9,133,466

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վարկային պորտֆելում հաճախորդներին տրամադրված արժեզրկված (չաշխատող) վարկերի և փոխառությունների կառուցվածքը

Հազար ՀՀ դրամ	30.06.18	31.12.17
Վարկեր և փոխառություններ, որից	67,215,320	63,441,410
արժեզրկված (չաշխատող) վարկեր և փոխառություններ, այդ թվում՝	3,047,809	3,517,424
ժամկետանց	167,865	488,581
Ընդամենը վարկեր	67,215,320	63,441,410
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխառությունների գծով	(1,456,918)	(1,396,823)
Ընդամենը գուտ վարկեր և փոխառություններ	65,758,402	62,044,587

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունը ըստ վարկավորման ոլորտների

